ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2026 թվականի N 227 - Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 1798-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի N 557-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետով և 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 557-Ա որոշման 5-րդ կետի համաձայն՝ «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարման արդյունքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ամրացված շարժական գույքը (այսուհետ՝ գույք), բացառությամբ տրանսպորտային միջոցների, հետ վերցնել և սեփականության իրավունքով հանձնել նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպություններին՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Գույքի կազմից՝

1) «ԳԱԶ A65R33-60VIN» մակնիշի տրանսպորտային միջոցը (հաշվառման համարանիշը՝ 458CL61) հետ վերցնել և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 2 հավելվածի.

2) «ԳԱԶԵԼ» մակնիշի տրանսպորտային միջոցը (հաշվառման համարանիշը՝ 241LU32) հետ վերցնել և սեփականության իրավունքով հանձնել «Օթևան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 3 հավելվածի.

3) «ՎԱԶ-21214» և «ՌԱՖ 220301» մակնիշի տրանսպորտային միջոցները (հաշվառման համարանիշները՝ 111UL02 և 408US34) հետ վերցնել և հետագայում օտարելու նպատակով ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին՝ համաձայն N 4 հավելվածի:

3. Նախարարության համար Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով հաստատված՝ 1206 ծրագրի («Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ») 32002 միջոցառմամբ («Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացում») հատկացված միջոցների հաշվին սահմանված ընթացակարգերով և մատակարարների հետ կնքված պայմանագրերի համաձայն ձեռք բերված և մատակարարված ապրանքները սեփականության իրավունքով հանձնել նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն N 5 հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ կազմակերպությունների ղեկավարների հետ համատեղ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քսանօրյա ժամկետում ապահովել՝

1) սույն որոշման հավելվածներում նշված գույքը կազմակերպություններին որպես պետական սեփականություն անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու և սեփականության իրավունքով հատկացնելու մասին պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի կնքման աշխատանքների իրականացումը.

2) կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված և սեփականության իրավունքով հանձնված գույքի մուտքագրումը կազմակերպությունների հաշվեկշիռ.

3) անհատույց օգտագործման իրավունքով ամրացված և սեփականության իրավունքով հանձնված տրանսպորտային միջոցների վերահաշվառումը սույն որոշման NN 2 և 3 հավելվածներում նշված կազմակերպությունների անվամբ:

5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո քսանօրյա ժամկետում սահմանված կարգով ապահովել սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը՝ տրանսպորտային միջոցների տեղափոխման և հաշվառման աշխատանքներն իրականացնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել կազմակերպություններին սեփականության իրավունքով հանձվող գույքերի նոր կազմերը՝ հաշվի առնելով սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույթները:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով գույք հանձնելու մասին» N 1798-Ա որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելվածի «Նորք» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ» բաժնի՝

ա. 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

բ. «Ընդամենը» տողի «Ընդհանուր գինը (դրամ)» սյունակի «17672930.0» թիվը փոխարինել «16553000.0» թվով.

2) հավելվածի «Ընդհանուրը» տողի «Ընդհանուր գինը (դրամ)» սյունակի «150,673,790.0» թիվը փոխարինել «149,553,860.0» թվով:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի «Սոս-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ դրամաշնորհի պայմանագիր կնքելու և «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին» N 557-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանում՝

1) «18-րդ մասով» բառերից հետո լրացնել «և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով» բառերով.

2) որոշման 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին և 5.2-րդ կետերով՝

«5.1. Նախարարության հաշվեկշռում որպես պաշար հաշվառված փոքրարժեք և արագամաշ առարկաները հետ վերցնել և ամրացնել նախարարության միասնական սոցիալական ծառայությանը՝ խնամքի կամ կացարանով ապահովման ոլորտին ուղղված պետական ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) իրականացման շրջանակներում որպես բնաիրային աջակցություն շահառու ընտանիքներին բաշխելու նպատակով:

5.2. Նախարարության միասնական սոցիալական ծառայության պետին՝ մեկամսյա ժամկետում ապահովել ծրագրերի շահառու ընտանիքների կարիքների գնահատման հիման ամրացված պաշարները բաշխելու գործընթացը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ